

ՏՓՂԻՄ – ՓԱՅՏԱԿԱՐԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ  
ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

*Մ. Գ. Կատմագիր Թովմա Արծրունու «Հրաման ետ հասանել ի վերայ քաղաքին Տփղիք կոչեցեալ, յորում յառաջագոյն Փայտակարան անուանէին»<sup>1</sup> նախադասության ընդգծված հատվածը մի շարք ուսումնասիրողներ համարել են երկու քաղաքների նույնականացման փորձ, Փայտակարանի սխալ տեղադրություն: Այդ հարցին, թերևս, առաջինն անդրադարձել է Ղուկաս Ինճիճյանը. «Պարտ է այժմ քննել զդժուարությունն, որ ծագի ի բանից յետագայ մատենագրաց, քանզի սոքա սկսեալ ի Թովմայէ Արծրունոյ՝ նոյն կացուցանեն զՓայտակարան ընդ Տփիսիս քաղաքի»<sup>2</sup>: Եւ, իրոք, Վարդան վարդապետը, Արծրունու բնագրից հանելով «յորում յառաջագոյն... անուանէին»-ը, գրում է. «Փայտակարան Տփիսիս է: Վարդանակերտ Տփղէց վիճակն է»<sup>3</sup>:*

*Բ. Հարությունյանը, որոշ վերպահությամբ, նույն «սխալը» տեսնում է և Դրասխանակերտցու Պատմության մեջ. «Եթե Դրասխանակերտցու մոտ հիշյալ նույնացումը կարելի է եզրակացնել, ապա Վարդանի «Աշխարհացոյցում» պարզորոշ ասված է. «Փայտակարան Տփղիս է»<sup>4</sup>:*

*Մանրամասն չանդրադառնալով Փայտակարան աշխարհի և համանուն քաղաքի տեղադրության հետ կապված բազմակարծությանը՝ նշենք երկուսը. «Փայտակարան աշխարհը ընդգրկում էր Մեծ Հայքի արևելյան կողմերը՝ Գուրի և Արարսի գետաբերանի շրջանից մինչև Ատրպատական և Կասպից ծով: Հայ պատմագրության մեջ այդ տարածքը կոչվել է նաև Կազբբ, Կազբիանա, Կասիք, Պայտակարան... Գոյություն ունեւ համանուն Փայտակարան քաղաք, որը Փայ-*

<sup>1</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն. Պատմութիւն տանն Արծրունեաց.– Մատենագիրք Հայոց (այսուհետև՝ ՄՀ), հ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 194:

<sup>2</sup> Ղ. Ինճիճեան. Ստորագրութիւն Հին Հայաստանեայց, Վէնէտիկ, 1822, էջ 327:

<sup>3</sup> Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի: Քննական հրատարակութիւն Հայկ Պերպերեանի, համեմատութեամբ 24 ձեռագրի և տպագրի, Բարիզ, 1960, էջ 36:

<sup>4</sup> Բ. Հարությունյան. Փայտակարան քաղաքը և նրա տեղադրությունը.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, - 12, էջ 75:

տակարան աշխարհի կենտրոնն էր՝ քարաշեն, պարսպապատ»<sup>5</sup>: Քաղաքի Փայտակարան աշխարհում գտնվելու փաստն անառարկելի է. տարակարծությունները քաղաքի կոնկրետ տեղադրության վերաբերյալ են: Բ. Հարությունյանը գտնում է, որ «Փայտակարանը պետք է գտնվեր ներկայիս Սալիան քաղաքից դեպի արևմուտք, այժմ չորացած Մահուդճալա լճի մերձակայքում»<sup>6</sup>:

Ընդհանրապես պատմական բազմաթիվ տեղանունների, այդ թվում Փայտակարանի համոզիչ ստուգաբանություն չկա: «Փայտակարան անունը հայկական կը հնչէ, բայց հայերենով չի մեկնուիր. Վասն զի հայ. փայտ և կարան իմաստ չեն տար: Տարակոյս չկայ, որ ծագումը հայկական չէ (կասպեա՞ն է): Արաբացիք անունս աղաւաղելով՝ Bailaqān ձեւը տուին անոր»<sup>7</sup>:

Ըստ Ս. Պետրոսյանի՝ «...արաբա-պարսկական աղբյուրներում վկայված Baylakān-ը ենթադրում է \*Phaylakārān տարբերակը, որը արաբերենում քի (փ) հնչյունի բացակայության պատճառով արտասանվել է \*Baylakarān, ապա կրճատ Baylakan ձևով»<sup>8</sup>:

Անդրադառնանք մեզ հետաքրքրող հարցին. այն է՝ արդյոք Արծրունին նույնացրե՞լ է Տփղիսն ու Փայտակարանը: Կարծում ենք՝ ոչ: Փորձենք հիմնավորել փաստերով բնականաբար չհավակնելով անքննադատ ընդունելության:

1. Թ. Արծրունին քաջատեղյակ էր հայ պատմագիրների գործերին և հղումներ ունի Բուզանդից, Եղիշեից, Խորենացուց: Բերենք Փայտակարանի մասին Խորենացու վկայությունը. «Վասն որոյ եկեալ գործակալք կողմանցն արևելից հիւսիսոյ, վերակացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան»<sup>9</sup>: Այս հատվածը վերաբերում է Գրիգորիսի սպանությանը. շարունակության մեջ Խորենացին նշում է Փայտակարանի տեղադրությունը. «...ի Վաստեան դաշտին, մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով»:

Այս կարգի փաստերին ծանոթ անձնավորությունը չէր կարող թույլ տալ տեղադրության կոպիտ սխալ:

2. Արծրունու Պատմության տեղանվանական համակարգը հիմնականում գիտական է, և որոշ տեղանունների առաջին վկայությունը գտնում ենք այդ գործում՝ Ապղանստան, Փայտակղտան. «Դէպ եղև ինձ հանդիպել եկելոց ոմանց ի

<sup>5</sup> Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, 2001, էջ 230:

<sup>6</sup> Բ. Հարությունյան. նշվ. հոդվ., էջ 75:

<sup>7</sup> Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907, էջ 106:

<sup>8</sup> Ս. Պետրոսյան. Թրակա-կիմերական էթնիկական տարրը Արաքսի հոսանքի շրջանում. – ՊԲՀ, 1979, - 1, էջ 194:

<sup>9</sup> Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց. Քննական բնագիրը և ներածութիւնը Ս. Արեղեանի և Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 259:

յԱպդանստան աշխարհէ» (ՄՀ, 72), «Պատահէին անհուն բազմութեանն ի Փայտակշտան գեաւդ» (ՄՀ, 261):

Բուն Մարդաստան տեղանվան մասին Ս. Երեմյանը գրում է. «Աշխարհացոյցի» մեզ հասած օրինակներում բացակայում է, մենք վերականգնում ենք շնորհիվ Թովմա Արծրունու»<sup>10</sup>:

3. Արծրունու Պատմության մեջ Փայտակարան-ը վկայված է լոկ մեկ անգամ, Տփղիս-ը՝ հինգ: Տփղիսի մասին առաջին հաղորդման մեջ Արծրունին շեշտում է քաղաքի Վրաստանում գտնվելը. «Եւ տաց քեզ ... զմեծ մասն աշխարհին Վրաց մինչեւ զՏփղիս քաղաք» (ՄՀ, 123):

Բացի մեզ հետաքրքրող օրինակից ոչ մի այլ տեղ Տփղիսի և Փայտակարանի նույնացման հիշատակություն չկա, իսկ Փայտակարանի եզակի վկայությունն էլ հուշում է, որ, առհասարակ, բուն Փայտակարանի տեղադրության կամ նկարագրության հարցը Պատմության տեղանվանական համակարգում ընդգրկված չէ:

Գուցե և ոչ այնքան կարևոր փաստ ևս. Արծրունու Պատմության գրքի (1852 թ., Կոստանդնուպոլիս) հատուկ անունների ցանկում Փայտակարան գետեղված չէ: Վրիպէ լ է արդյոք հրատարակիչը, թե՞ ճիշտ է վարվել:

4. Մերժելի է այն կարծիքը, որ «Արծրունին անձանոթ էր իսկական Փայտակարանի տեղադրությանը, որը հավանաբար IX-X դդ. մոռացվել էր արդեն»<sup>11</sup> (ընդգծումը մերն է – Լ. Ն.): Հենց X դ. պատմագրության մեջ առկա է այդ քաղաքի ճիշտ տեղադրության վկայություն. «Յաւարի առեալ զաշխարհն պարսից՝ դառնայ ընդ Մարս, զայ հասանէ ի Փայտակարան, յաշխարհն Կասպից»<sup>12</sup>:

Մի դիտարկում ևս. հայ մատենագրության մեջ կան բազմաթիվ տեղանունների մեկնություններ, որոնք հիմնավորվում են այս կամ այն լեզվի զուգահեռով. հմմտ. «Նա և զարքունիսն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ, ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր»<sup>13</sup>, «Գայր հասանէր ի քաղաքագեօղն Բագաւան, որ անուանեալ կոչի պարթևարէն լեզուէն Դիցաւան»<sup>14</sup>, «Քաղաք մեծապայծառ... Կոստանդնուպոլիս անուանէր, որ թարգմանի հայերէն՝ Կոստանդիանոսի քաղաք»<sup>15</sup>:

<sup>10</sup> Ս. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 45:

<sup>11</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն. Պատմություն Արծրունյաց տան, թարգմ. և ծանոթ. Վ. Վարդանյանի, Երևան, 1978, էջ 187:

<sup>12</sup> Ստեփանոս Տարաւնեցի Ասոդիկ. Պատմութիւն տիեզերական.– ՄՀ, հ. ԺԵ, Ժ դար, Երևան, 2011, էջ 713:

<sup>13</sup> Սոփուէս Խորենացի. Պատմութիւն Հայոց, էջ 265:

<sup>14</sup> Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց. քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 456:

<sup>15</sup> Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց. քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանցի, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 12:

Այդպես է և Արտամատի՝ Արծրունու «ստուգաբանությունը». «Արտամատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակերտ, կամ թէ Արտաշէսի եկք, գի ըստ պարսիկ ձայնի Մատ Եկք թարգմանի» (ՄՀ, 96): (Որոշ ձեռագրերում Մատ-ի փոխարեն ամատ է, որն ավելի ճիշտ է):

Կարծում ենք՝ «Տիդիք կոչեցեալ, յորում յառաջագոյն Փայտակարան անուանէին» նախադասության մեջ Փայտակարանը որպէս հատկանուն չպետք է դիտել: Արծրունին նկատի է ունեցել Տիդիս քաղաքի բոլոր կառույցների փայտաշէն լինելը, որը և արձանագրում է նախադասության շարունակության մեջ. «Եւ փայտից մայրեաց շինեալ էր քաղաքն նոցա՝ պարիսպ և պատուարք եւ ապարանք նոցա եւ ամենայն տուն բնակաց նոցա» (ընդգծումը մերն է – Լ. Ն.):

Փայտակարանը այս համատեքստում կարելի է համարել շրջասություն: Շրջասությունները բառեր կամ բառակապակցություններ են, որոնցով առարկան կամ գործողությունն անուղղակիորեն են անվանվում, ինչպէս Բուրգերի երկիր = Ճապոնիա, Նոր Բաբելոն = Փարիզ, Վարդագոյն քաղաք = Երևան, Չինական Մանչեստր = Շանհայ և այլն<sup>16</sup>:

Արծրունու Պատմության համատեքստում փայտակարան՝ փայտ+(ա)+կար+ան բառը արտահայտում է Փայտաշէն՝ փայտե կառույցներ իմաստը: Իրանական ծագում ունեցող kr, kār- «շինել, գործ» առկա է նաև գրաբարից ավանդված մի շարք բառերում՝ կաշկակար<sup>17</sup>, խորանակար «վրանագործ»: Նույն արմատի կերտարբերակով ունենք խոհակեր «խոհարար, ճաշ պատրաստող»: Պարսկերեն խոսակցական լեզվում kār-ը ունի նաև «շինություն, կառույց» իմաստը<sup>18</sup>: kār-ով կազմված անցյալ կատարյալի բայական հիմքն է kert/կերտ-ը, որը բացի տեղանվանակազմ ձևույթ լինելուց, ցույց է տալիս նաև «մի բանից պատրաստված» լինելը. հմմտ. ձեռակերտ, մոմակերտ, փայտակերտ...<sup>19</sup>, որոնք վկայված են գրաբարում: Ինչ վերաբերում է ան ձևույթին, ապա այն հոգնակերտ է, որը առկա-

---

Այս կարգի օրինակների մասին տե՛ս Լ. Նովիանինիսյան. Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Երևան, 2016:

<sup>16</sup> Շրջասությունների օրինակները տե՛ս Պ. Բեդիրյան. Հայերեն շրջասությունների բառարան, Էջմիածին, 2002:

<sup>17</sup> Կաշկակար-ի երկրորդ բաղադրիչը համարում ենք ոչ թե կարել-ի (թելով, փոկով) արմատը, այլ՝ kār «գործ»-ը: Գրաբարում կա և կաշկագործություն բառը:

<sup>18</sup> Տե՛ս Պերսիդսկո-русский словарь, т. II. М., 1970, с. 287.

<sup>19</sup> Կար/կերտ ձևույթների մասին տե՛ս Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան, հ. II, Երևան, 1973, էջ 579–580:

*յանում է դարձյալ գրաբարյան շրջանից ավանդված մի շարք բառերում՝ իշան, ձիան<sup>20</sup>.....:*

*Արծրունին Տփղիս քաղաքին բնորոշ առանձնահատկությունը նշելու համար, փաստորեն, ստեղծել է նոր բառ՝ փայտակարան՝ մանրամասն բացատրելով այդ բառի իմաստը:*

ОБ ИДЕНТИФИКАЦИИ ГОРОДОВ  
ТПХИС – ПАЙТАКАРАН

ЛАВРЕНТИЙ ОГАННИСЯН

Резюме

Предложение «Тпхис, что раньше называли Пайтакараном» в труде Товма Арцруни «История дома Арцруни» исследователи считали идентификацией двух городов, т. е. ошибочным местоположением Пайтакарана. В продолжении этого предложения автор подсказывает, что он не отождествляет эти города, а указывает характерную особенность Тпхиса – «Весь город ... все их сооружения построены из деревьев». В контексте *Пайтакаран* можно считать перифразой. Об исконном Пайтакаране Арцруни не упоминает. Пайтакаран упоминается лишь в вышеприведенном предложении.

CONCERNING THE IDENTITY OF THE CITIES  
TPGHIS – PAITAKARAN

LAVRENTI HOVHANNISYAN

Summary

The phrase “Трghis that was formerly called Paitakaran” in “The History of the Artsruni Family” by Tovma Artsruni has been considered as identification of the two cities. This is a flagrant error concerning the location of Paitakaran. The continuation of the sentence prompts that the author’s intention was not to identify Paitakaran with Трghis, but to indicate the characteristic feature of the latter: “All the buildings in the city were constructed with cedar trunks”. In the context Paitakaran can be taken as a periphrasis. Paitakaran is only mentioned once in passing, in the sentence in question.

<sup>20</sup> –ան ածանցի ծագման և գործածության մասին (տե՛ս Գ. Ջ ա հ ո յ յ ա ն. Հին հայերենի վերջածանցների ծագումը.– Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, Երևան, 1998, էջ 12):